

ներէ՛ որոնց քով աւելի հիւր եղած է, ոչ թէ քրիստոնեայ Հայերէ՛ որոնք տակաւին մեծ բազմութեամբ կ'ապրին Պոնտական լեռներէն մինչեւ Կարին՝ իրենց մահմետականացած ցեղակիցներուն հետ: Արդ այն գծի մասին՝ որ Րիզէէ մինչեւ Կարին իբր 250 քիլոմետր է, կ'ուզենք քանի մը խօսք ըսել, մենք՝ որ հայրենեօք ալ այս լեռնաշղթայէն ըլլալով (Խոտրջուր), առիթ ունեցած ենք յետոյ 1910ին այլեւայլ ուղղութեամբ կտրելու անցնելու այս զաւառաց մեծ մաս մը եւ երկար ժամանակէ ի վեր աշխատած ենք ուսումնասիրելու անոնց անցեալը:

## Ա.

### Պատմական Ակնարկ:

Հայ ցեղն հնուց իսկ անհրաժեշտաբար աղերս ունենալու էր Հայաստանի սահմաններէն քիչ մը հեռու Սեւ ծովու ափանց հետ: Արդ ճշդիւ այն ծովափը, ուր կը գտնուի հայ Համէն, կը վերաբերէր Հայաստանի նոյն իսկ երբ ասի պատմութեան մէջ կ'երեւայ առաջին անգամ Armenia ձեւով: Դարեհի օրով Հայաստան բաժ-